ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2012թ.20.01 N 46-Ա/Ք հրամանի

<<ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ>>

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳԻՐ

(5-**րդ դասարան**)

<<ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ>>

ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

(5-**րդ դասարան**)

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Հայրենագիտության առարկայական չափորոշչի մշակման համար հիմք են ծառայել <<Կրթության մասին>> ՀՀ օրենքը, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքը և Հանրակրթության պետական չափորոշիչը:

Սույն դասընթացը նախատեսված է հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի սովորողների համար:

<<Հայրենագիտություն>> առարկայի չափորոշիչն ունի հետևյալ կառուցվածքը. հայեցակարգ, որտեղ ներկայացված են առարկայի ուսումնական նպատակներն ու խնդիրները, դասընթացի կառուցման հիմքում ընկած հիմնական սկզբունքները, բովանդակային միջուկը, ուսումնական գործունեության տեսակները, սովորողին ներկայացվող պահանջները (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ), սովորողի արժեքային համակարգը, գրականության ցանկ:

Հայեցակարգ

<<Հայրենագիտություն>> առարկան ինտեգրացված դասընթաց է, որի հիմքում ընկած է հայրենիքի ճանաչողությունը: Դասընթացը նպատակ ունի.

- զինել աշակերտներին մեր հայրենիքի, նրա պատմության, աշխարհագրության, մշակույթի, ազգային արժեքների մասին նախնական գիտելիքներով:
- Պատկերացում տալ մեր ժողովրդի ստեղծած բանահյուսական նյութերի, <<Սասնա ծռեր>> դյուցազնավեպի մասին:
- Ծանոթացնել սովորողներին հայ մշակույթի նշանավոր գործիչների, նրանց հանրահայտ ստեղծագործությունների հետ:

- Ձևավորել հուզական-արժեքային և հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի, իր փոքր հայրենիքի (մարզ, քաղաք, գյուղ), ինչպես նաև պատմական հայտնի հուշարձանների նկատմամբ:
- Դաստիարակել սեր և հարգանք հայրենի երկրի, նրա արժեքների նկատմամբ:
- Ցույց տալ, որ հայոց լեզուն աշխարհի ամենագեղեցիկ ու հնագույն լեզուներից մեկն է:
- Ներկայացնել հայ առասպելական զորավարներին ու հերոսներին և նրանց անմահ սխրանքները:
- Ծանոթացնել հայազգի նշանավոր գործիչների, նրանց ազգանվեր գործունեությանը, սերմանել սեր ու հարգանք նրանց կյանքի ու գործի նկատմամբ:
- Ցույց տալ Հայոց եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում:
- Ցույց տալ հարազատ մարզի, գյուղի, քաղաքի տեղն ու դերը մեր երկրի պատմության մեջ, Հայրենիքի շենացման և հզորացման գործում:

Հայրենագիտության դասընթացի նպատակն է նաև սովորողների մեջ ձևավորել ու զարգացնել ճանաչողական, տրամաբանական, հաղորդակցական կարողություններ ու հմտություններ:

Դասընթացի կառուցման հիմքում դրված են հետևյալ հիմնական սկզբունքները.

- ընդհանրական հայացք հայրենի պատմությանը, վիպական, ավանդապատումային զրույցների և պատմական նյութի և մշակութային արժեքների միջոցով,
- ընդհանրական հայացք սեփական երկրին, հայրենի երկրամասին և բնակավայրին:

ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՄԻՋՈՒԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Հայրենիք>> հասկացությունը:

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Հայկական լեռնաշխարհը որպես հայության բնօրրան:

Հայաստանի Հանրապետություն;

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որպես հայկական երկրորդ պետություն:

Իմ փոքրիկ հայրենիքը. գյուղ, քաղաք: Ավանդություններ, պատմություններ հանրահայտ տեղանունների և հուշարձանների մասին:

ԻՄ ԼԵԶՈՒՆ, ԻՄ ՀԱՎԱՏԸ, ԻՄ ԵԿԵՂԵՑԻՆ

Հայերենը Հայաստանի պետական լեզու:

Տեղեկություններ արևելահայերենի, արևմտահայերենի և բարբառների մասին:

Հայ առաքելական եկեղեցի:

ԶՐՈՒՅՑՆԵՐ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Նահապետ թագավորներ:

Արքայատոհմեր:

Վանի թագավորության արքաներ:

Արտաշեսյաններ:

Արշակունիներ:

Բագրատունիներ:

Կիլիկիա:

Հայոց անկախ պետականության վերածնունդը և անցած ուղին (1918-1991թթ.):

ՄԵՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Ինչ է մշակույթը: Ժողովրդական մշակույթ:

Ժողովրդական բանահյուսություն: Առասպելական պատմություններ: <<Սասնա ծռեր>> դյուցազներգությունը:

Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև:

Մովսես Խորենացի, Անանիա Շիրակացի:

Գրիգոր Նարեկացի, Հովհաննես Թումանյան, Եղիշե Չարենց:

Սայաթ-Նովա, Կոմիտաս, Արամ Խաչատրյան, Շարլ Ազնավուր:

Թորոս Ռոսլին, Մարտիրոս Սարյան:

Տրդատ, Ալեքսանդր Թամանյան, Ռաֆայել Իսրայելյան:

Հայաստանի մայրաքաղաքներ:

Քաղաքամայր Երևանը:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ
Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ

Ուսումնառության ընթացքում սովորողը պետք է՝

Առաջին մակարդակ	Երկրորդ մակարդակ	Երրորդ մակարդակ
Պատկերացում ունենա - Հայաստանի աշխարհագրական դիրքի, տարածքի և բնության, - Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասին, -իր գյուղի, քաղաքի մասին:	**Իմանա** - հայրենիք հասկացության բովանդակությունը:	**Կարողանա** - մեկնաբանել <<Հայաստան>>, <<Հայաստանի Հանրապետություն>>, <<Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն>>, <<Պատմական Հայաստան>> հասկացությունները,
Կարողանա -պատմել իր գյուղի, քաղաքի մասին: - ընդհանուր գծերով նկարագրել իր գյուղը, քաղաքը:	**Կարողանա** - Քարտեզի օգնությամբ ներկայացնել իր բնակավայրի, մարզի աշխարհագրական դիրքը- ներկայացնել իր բնակավայրի, շրջակայքի վերաբերյալ եղած զրույցներ, ավանդություններ:	**Կարողանա** - ինքնուրույն գրի առնել իր բնակա-վայրի վերաբերյալ այլ պատմություններ, ավանդապատումներ, բանահյուսական նյութեր, - գործնական աշխա-տանքի և լրացուցիչ այլ նյութերի ուսումնասի-րության հիման վրա ինքնուրույն ներկայաց-նել իր բնակավայրում գտնվող հնագիտական և ճարտարապետական նշանավոր հուշարձանները,
Պատկերացում ունենա և կարողանա համառոտ պատմել - Հայաստանի պատմաաշխարհագրական նշանավոր վայրերի	**Իմանա** - որ հայերենը Հայաստանի պետական լեզուն է,	

(Մասիս, Արաքս, Արածանի, Տաթև և այլն) մասին: - հայ ժողովրդական ավանդությունների, - արհեստների - կենցաղային մշակույթի - մայրաքաղաք Երևանի, - հայոց լեզվի դերի, արևելահայերենի ու արևմտահայերենի, բարբառների, - Հայ առաքելական եկեղեցու մասին, - հայոց պատմության տարբեր դարաշրջաններին վերաբերող առասպելների, հայոց թագավորների, նշանավոր գործիչների ու հերոսների մասին:	- քրիստոնեության ընդունման նշանակության մասին, - հայկական առասպելների, զրույցների, ավանդությունների բովանդակությունը, - իմանա հայ մեծանուն գործիչների մասին: **Կարողանա** - ներկայացնել հայ նշանավոր արքաների կարևոր գործերը - համեմատություններ անցկացնել տարբեր դարաշրջանների պատմական գործիչների միջև:	- բացատրել մայրենի լեզվի կարևորությունը, - ներկայացնել իր բնակավայրի և շրջակայքի եկեղեցական կառույցները, հուշարձանները: - բնութագրել հայ գործիչների ներդրումը հայոց պետականու-թյան և մշակույթի զարգացման գործում:

Արժեքային համակարգ

Ներկայացվող պահանջները դրսևորվում են սովորողի՝ որպես անձի և քաղաքացու վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով:

Հայրենագիտության ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է

Գիտակցի

- որ Հայաստանն իր հայրենիքն է
- որ Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հայոց պետականության ժառանգորդն են

Գնահատի

- ժողովրդական վարպետների, մշակութային գործիչների ստեղծած արժեքները,

- իրեն համարի այդ արժեքների օրինական ժառանգորդը, պահպանողն ու փոխանցողը,
- հայոց լեզվի՝ որպես աշխարհի հնագույն լեզուներից մեկի, պատմամշակութային արժեքը,
- ժողովրդական բանահյուսությունը որպես ժողովրդի պատմության, ազգային հերոսների մասին պատմող անսպառ գանձարանի,

Կարևորի

- Հայ առաքելական եկեղեցու ունեցած կարևոր դերը հայոց պատմության մեջ,
- հայոց պետական և մշակութային նշանավոր այրերի գործունեությունը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ուսուցման գործընթացում՝ կախված թեմայից, դասի նպատակներից, դասարանից, սովորողների առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, տվյալ դասի կամ դասի առանձին հատվածի համար կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները՝

ուսումնական նյութի բացատրում

լուսաբանում

քարտեզների դիտարկում, ցուցադրում, պատրաստում

տեղանքի դիտարկում, ուսումնասիրում

էքսուրսիաների անցկացում

նկարների, ֆիլմերի դիտում, քննարկում

ուսումնական ձեռնարկների և այլ աղբյուրների ուսումնասիրում

գործնական և փորձնական աշխատանքների կատարում

ստեղծագործական աշխատանքների կատարում

տեխնիկական սարքերով և գործիքներով աշխատանքների կատարում

խաղերի, մրցույթների, հանդեսների անցկացում

իրավիճակների և արդյունքների վերլուծում

գրավոր աշխատանքների կատարում, հաղորդում

բանավոր և գրավոր հարցադրումների, թեստային աշխատանքների, ստուգարքների անցկացում

նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի օգտագործում

անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ, Երևան, 2011:
2. Աշխարհը և Հայաստանը, աշխարհագրական ատլաս, Երևան, Մակմիլան-Արմենիա, 2004:
3. Գաբրիելյան Հ., Հայկական լեռնաշխարհ, Երևան, 2000:
4. Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1980:
5. Գրիգորյան Գ., Հին և միջնադարյան Հայաստանի պատմավիպական հերոսները, Երևան, Լույս, 1990:
6. Դիլանյան Ս., Մոռացված գանձերի արձագանքը, Մանկական հանրագիտարան, Երևան, Արեգ, 2001:
7. Լալայան Ե., Երկեր, հ. 1, Երևան, 1983, հ. 2, Երևան, 1988:
8. Լիպս Յ., Իրերի ծագումը, մարդկության կուլտուրայի պատմությունից, Երևան, Հայպետհրատ, 1957:
9. Հարությունյան Ս., Հայ հին վիպաշխարհը, Երևան, 1987:
10. Հայոց եկեղեցու պատմություն-6, դասագիրք հանրակրթական դպրոցի, Վ. Ղանդիլյան, Ա. Նազարյան, Ա. Գյուլբուդաղյան, Վ. Դևրիկյան, Երևան, Կրթության ազգային ինստիտուտ, 2008:
11. Հայոց եկեղեցու պատմություն, ուսուցչի ձեռնարկ, 4-5-րդ դասարաններ, Ա. Ղուկասյան, Վ. Պարսամյան և ուր., Երևան, Կրթական բարեփոխումների կենտրոն, 2003:
12. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1969:
13. Ղևոնդ Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002:
14. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, ցանկացած հրատ.:
15. Ջահուկյան Գ., Ջրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, Կանչ, 1992:
16. Վասիլյան Վ., Առասպելներից մինչև Բյուրական, Երևան, Սովետական գրող, 1985:
17. http://www.armenianhistory.info/glossary3.htm
18. www.eurasianet.org/resource/armenia/links/history.shtml - GIS+ պատմական քարտեզներ և Հայաստանի աշխարհագրության վերաբերյալ նյութեր
19. www.armenica.org/
20. www.encyclopedia.com/html/section/armenia_history.asp
21. www.encarta.msn.com/encnet/features/onthisday.aspx

<<ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ>>
ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

(5-**րդ դասարան**)

Բացատրագիր

Հայրենագիտության սույն դասընթացը նախատեսված է հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի սովորողների համար: Այն միասնացված (ինտեգրված) դասընթաց է:

Առարկայի դասավանդմանը հատկացվում է շաբաթական 1 ժամ, տարեկան՝ 34 ժամ, որից 6 ժամ՝ կրկնություններին, թեմատիկ և կիսամյակային ամփոփիչ աշխատանքներին:

ԾՐԱԳԻՐ

(5-**րդ դասարան**, **շաբաթական** 1 **ժամ**, **տարեկան** 34 **ժամ**)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 **ժամ**)

<<Հայրենիք>> հասկացությունը:

ԹԵՄԱ 1. **ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ** (6 **ժամ**)

Հայկական լեռնաշխարհը որպես հայության բնօրրան: Համառոտ տեղեկություններ աշխարհագրական դիրքի, տարածքի վերաբերյալ:

Համառոտ տեղեկություններ Հայաստանի Հանրապետության մասին :

Համառոտ տեղեկություններ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, որպես հայկական երկրորդ պետության մասին :

Իմ փոքրիկ հայրենիքը. գյուղ, քաղաք: Ավանդություններ, պատմություններ հանրահայտ տեղանունների և հուշարձանների մասին:

ԹԵՄԱ 2. **ԻՄ ԼԵԶՈՒՆ**, **ԻՄ ՀԱՎԱՏԸ**, **ԻՄ ԵԿԵՂԵՑԻՆ** (3 ***ժամ***)

Հայոց լեզուն որպես աշխարհի հնագույն լեզուներից մեկը: Հայերենը Հայաստանի պետական լեզու:

Համառոտ տեղեկություններ արևելահայերենի և արևմտահայերենի մասին, բարբառներ:

Հայ առաքելական եկեղեցի:

ԹԵՄԱ 3. **ԶՐՈՒՅՑՆԵՐ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ** (8 ***ժամ***)

Մեր հայրենիքի անցյալը: Նահապետ թագավորներ (Հայկ, Արամ):

Արքայատոհմեր.

- Վանի թագավորության արքաներ (Մենուա, Արգիշտի Առաջին)
- Արտաշեսյաններ (Արտաշես Առաջին, Տիգրան Մեծ)
- Արշակունիներ (Տրդատ Առաջին, Տրդատ Երրորդ Մեծ)
- Բագրատունիներ (Աշոտ Առաջին, Գագիկ Առաջին)
- Կիլիկիա (Ռուբեն Առաջին, Լևոն Երկրորդ):

Համառոտ տեղեկություններ Հայոց անկախ պետականության վերածննդի և անցած ուղու (1918-1991թթ.) մասին:

ԹԵՄԱ 4. **ՄԵՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ** (10 ***ժամ***)

Ինչ է մշակույթը: Ժողովրդական մշակույթ (ոսկերչություն, գորգարվեստ, գինեգործություն, խոհանոց):

Ժողովրդական բանահյուսություն: Առասպելական պատմություններ (Վահագն Վիշապաքաղ, Արա Գեղեցիկ և Շամիրամ): <<Սասնա ծռեր>> դյուցազներգությունը:

Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև:

Մովսես Խորենացի, Անանիա Շիրակացի:

Գրիգոր Նարեկացի, Հովհաննես Թումանյան, Եղիշե Չարենց:

Սայաթ-Նովա, Ֆ Կոմիտաս, Արամ Խաչատրյան, Շարլ Ազնավուր:

Թորոս Ռոսլին, Մարտիրոս Սարյան:

Տրդատ, Ալեքսանդր Թամանյան, Ռաֆայել Իսրայելյան:

Հայաստանի նշանավոր մայրաքաղաքների (Արմավիր, Վան, Արտաշատ, Դվին, Անի, Երևան) մասին:

Քաղաքամայր Երևանը:

Պահուստային ժամաքանակ՝ 6 ժամ